ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 150
07 մարտ 2018թ.

Հարգելի պարոն Գուլոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները 2018թ-ի մարտի 5-ից մարտի 7-ը ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատ.՝ Ա. Պետրոսյան
Հեռ.022263539

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 61-Ա

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ որոշում եմ

Հաստատել համայնքի ավագանու 2018թվականի մարտի 12-ի N 4 հերթական նիստի օրակարգը՝

1. ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
2. ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՊԱՀԻՑ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ մարտի 5

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 62-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 7-ի N 60-Ն որոշումը, որոշում եմ.

1. Բալահովիտ համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2. Հաստատել Բալահովիտ համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ հաշվապահ՝ Սվետլանա Դավթյանին:

4. Բալահովիտի համայնքապետարանի առաջատար մասնագետ հաշվապահ՝ ՍվետլանաԴավթյանին՝
   1) համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում տեղադրել Բալահովիտ համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար.
   2)համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական զարգացման ծրագրում հրապարակել 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ հաշվապահ՝ Սվետլանա Դավթյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Անդրանիկ Պետրոսյանը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018 մարտի 5

գ.Բալահովիտ

Հավելված

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Բալահովիտիհամայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2018թվականի մարտի 5-ից մինչև մարտի11-ը ներառյալ կազմակերպվող Բալահովիտհամայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Բալահովիտ համայնքի 2017թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կարող են մինչև 2018թվականի մարտի11-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնվել համացանցային կայքերում (balahovithamaynk@rambler.ru), հատուկ այդ նպատակով ստեղծված տեղում կամ ուղարկվել համապատասխան էլեկտրոնային հասցեով (balahovit.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացվել Բալահովիտի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում 2018թվականի մարտի 11-ին ժամը 15:00-ին 1-ինփողոց թիվ 38 հասցեում գտնվող Բալահովիտի համայնքապետարանի վարչական շենքի երկրորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2018թվականի մարտի 5-ը ներառյալ ներկայացնել դիմում:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 022263539 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՄԱՐՏԻ 2018թվականի N 63-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ

1. Համայնքի ղեկավարի 2018թվականի փետրվարի 14-ի <<Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին>> N 51-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1/Որոշման 2-րդ կետում <<254407>> թիվը փոխարինել <<277851>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2018թ մարտի 5

գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 ՄԱՐՏԻ 2018թվականի N 64-Ա

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 60-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, որոշում եմ

1. Բալահովիտ համայնքի ղեկավարի 2018թվականի փետրվարի 28-ի <<ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> N 60-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1/որոշման վերնագրում <<ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> բառերը փոխարինել <<Բալահովիտ համայնքի կին աշխատողներին պարգևատրելու մասին>> բառերով

2/որոշման նախաբանում <<Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի>> բառերը փոխարինել <<Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի>> 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի>> բառերով:

3/որոշման 1-ին կետում <<Բալահովիտ համայնքի սոց.օգնության 4729 հոդվածից /բաժին 10 խումբ 07 դաս 1/ 170.0 / մեկ հարյուր յոթանասուն հազար/ դրամ տրամադրել Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի կին աշխատողներին, որպես դրամական օգնություն, մարտի 8-ի կապակցությամբ>> բառերը փոխարինել <<Կանանց միջազգային տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ համայնքապետարանի կին աշխատողներին տալ միանվագ դրամական պարգևատրում>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ մարտի 7

գ.Բալահովիտ